ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ № 2
№ ԳՀԱՊՁԲ-7/9-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 17 .09.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Երվադա» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Հ. Մխեյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 24.05.2019թ. կնքված ԳՀԱՊՁԲ-7/9-1 պայմանագիրը և ՀՀ կառավարության 13.08.2020թ. N 1344-Ն որոշումը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

1. Փոփոխության առարկան

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին 24.05.2019թ. կնքված № ԳՀԱՊՁԲ-7/9-1 Պայմանագրում և այդ պայմանագրի 30.09.2019թ. կնքված N 1 փոփոխության մեջ կատարել փոփոխություն համաձայն կից Հավելվածներ N 1-ի և N 2-ի:

1.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 13.08.2020թ. N 1344-Ն որոշումը՝ Վաճառողի նկատմամբ կիրառվում են Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները՝ Պայմանագրով և Պայմանագրի N 1 փոփոխությամբ նախատեսված ապրանքների մատակարարման վերջնաժամկետից մինչև 25.12.2019թ. ընկած ժամանակահատվածի համար:

2. Այլ պայմաններ

2.1. Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Երվադա» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, Արին Բերդի 3/4
ՀՀ ՖՆԱ գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011024537	Հ/Հ 1570005353830100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 02231092
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ	Տնօրեն
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Հ. ՄԽԵՅԱՆ

Հավելված N 1

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝ ՍՈՒՅՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	Չ/մ	Քանակը	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	Մատակարարումը ոչ ուշ, քան 30.09.2020թ.
1	լոգանք ընդունելուն օժանդակող շարժական սարքեր /Շարժական դաշտային բաղնիք/	հատ	2	2000000	4000000	

Հավելված N 2

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝ ՍՈՒՅՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. պետական բյուջեից ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ., ընդ որում՝	
			3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	լոգանք ընդունելուն օժանդակող շարժական սարքեր /Շարժական դաշտային բաղնիք/	42414800/1	4000000	4000000

Ծանոթություն՝ վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՋՈԼՈՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Երվադա» ՍՊԸ տնօրեն

Հ. ՄԻՍԵՅԱՆ